

այցելութիւնը : Այս հանգիստումը
խաղաղական աշխարհին մէջ ահեղ
արձագանգ մը պիտի գտնէ :

Համիա ու իր հիւրը իսլամա-
կան պետութեանց երկու հզորա-
գոյն ներկայացուցիչներն են :
Առաջինը խալիֆան է, Մարգա-
րէին աշխարհային յաջորդը յաշտ
բոլոր ուղղափառ մուսլիմաննե-
րու : Երկրորդը գլխաւոր ներկա-
յացուցիչն է այն մեծ հերձուա-
ծին որ իսլամութիւնը երկու ա-
հապին ճիւղերու բաժնած է
Ալիի տան ահարկու բնաջնջու-
մէն, Մարգարէին թոռներուն,
Հասանի և Հիւսէյնի այն սպա-
նումէն ի վեր, զոր պարսիկները
զառանցաբին միտաբանուե-
թեամբ մը կը տօնեն ամէն տարի :
Իսլամական երկնքին այս եր-
կու հակառակորդ աստղերուն
մերձեցումը իր կարեւորութիւնն
ունի : Ասկէ զատ, սահմանակից
գաւառներու վրայ թափառաշրջ-
լիկ քիւրաբնու արշաւանքները
դժուարութիւններու պատճառ կը
դառնան իրենց մէջ : Վերջա-
պէս, Պարսկաստան, ինչպէս
Խուրբիա, կը զգան թէ ուրիշ-
ներու ցանկալի պատառ մըն են,
կը տեսնեն անդադրում վէճերը
երկու հակառակորդ ազգերու,
Անգլիոյ և Թուսիոյ, որոնք կը
ձգտին իրենց իշխանութիւնը
տարածել այս երկիրներուն վրայ,
և որոնք զարհուրելի շարունա-
կութեամբ մը կը գործադրեն վա-
ճառականական ու ճարտարա-
ուեսական տիրապետութեան
քաղաքականութիւնը : Այս նի-
թերը անսպառ առարկայ պիտի
հանդիսանան անշուշտ երկու պե-
տերուն միջեւ :

Թան

—)(—

Բ Ա Ն Ա Ս Ի Ր Ա Կ Ա Ն (8)

ԽԱԽԱՐԻՆ ՅԱՂԹԱՆԱԿԸ

Պ.

Սիրած էք,
Այսինքն ընդունած էք ձեր մէջ
նիւթերային այն ցուրը, աստուածային
այն կրակը, որ մարդու հոգին կը
վանագնէ, կը վերացնէ և անոր
էութիւնը կամրոջացնէ և կը լե-
ցունէ :
Կեանքը իր բազմատեսակ դժուար-
ութիւններուն, իր բոլոր տառա-
պանքներուն կից, իրաւ է, ունի
նաեւ շատ մը այլազան հրապուրներ,
բազմատեսակ անուշութիւններ ալ,
որոնք մեր տաժանելի գնացքին խու-
տուութիւնները կը մեղմեն, մեր յոգ-
նած ու վաստակաբեկ մարմինը կը
հանգչեցնեն, բայց ասանց սիրոյ նշու-
լագեղ ցոյքերուն, ասանց այդ կրա-
կին տաքութեանը, յաւեժական խա-
ւար մը միշտ պիտի պատէ զմեզ, բե-
ւեռային պաղութիւն մը մեր ջիւղերը
պիտի կծկէ շարունակ, և մեր ըմ-

ՊՈՒԿԱՐԱՅԱՅ ԹԱՏՐՈՆԸ

Թատրոնը դարձեց մըն է, ուր
կը ներկայացուին ժողովրդի զա-
նազան յոռի և ազնի բարքերը
խակական գոյներով, և որոնցմէ
պէտք է օրինակ առնէ հանգի-
սակներ : Ենթակա բարոյական դա-
սեր (ուստ) , ուրկէ պէտք է օգ-
տուիլ : Որքան պարզ է հետեւ-
ցնել թէ թատրոնի գերակա-
տարները ինչպիսի խաղեր պէտք
է ընտրեն ներկայացնելու հա-
մար ժողովրդին : Բայց արդիօք
ներկայ գերասանական խմբեր-
կարող են գոհացնել վերայիշեալ-
ները : ոչ :

Պուկարահայտութիւնը բաւական
թուով գերասանական խմբեր տե-
սաւ, բայց անոնց ամէնքն ալ
հակառակ ժողովրդի քաջալերու-
թեան չի կրցան իրենց գոյու-
թիւնը յարատեւել, միակ պատ-
ճառ ունենալով իրենց մէջ զըտ-
նուած խառնութիւնները :

Պատուեալներին խումբը բա-
ւական կանոնաւոր դրութեան
մէջ՝ հասաւ վառնա, բայց երկու
ամիսներէ ետքը քայքայուեցաւ,
նորէն կազմուեցաւ ու ցրուեցաւ,
այսպէս շարունակաբար :

Առնց ամենքն վերջը կարե-
ւոր տեղ մը կրցաւ բռնել «Վէսէլօ»
հայ գերասանական խումբը, որ
նմանապէս վերջերս զգալի պա-
կաս մը կրեց Տիկին Քնարի Պու-
կիս մեկնելովը Արշակ Սփաճեանի
մահովը : Տիկին Քնար իր ար-
ուեստագէտի ձյրքերով ու փոր-
ձառութեամբ մեծ պակաս մը կը
լրացնէր վերոյիշեալ խմբին մէջ :

Գաղթականութիւնն ալ բաւա-
կան թուով գերասաններու թատ-
րերգութիւններ տուաւ, բայց
այդ գրուածքներուն ամբողջն ալ
զուրկ բոլորովին արժէքէ, կը

պարունակէին իրենց մէջ տան-
ջուող հայութեան համար քանի-
մը միտաբանական խօսքեր միայն :
այսպէս եղան «Վառնայ հերոսներ»,
Սասուն, Ձէյթուն, Վրէժ եւ այլն
եւ այլն թատրերգութիւնները :

Հիմա նոր պարասանական խումբ
մըն ալ կազմուեցաւ վերջերս
Վառնա, և որ ուղեւորեցաւ դէպի
Տօպրիչ այցելելու համար Պու-
կարի մէջ քանի քաղաքները,
«որ Ստոյլ» խումբ անուան ներ-
քեւ : մեծ անուն, բայց մէջը բան
չիկայ : Արդէն Վառնայի հասա-
րակութեան յայտնի են այդ ան-
ձերը, որոնք ի նպաստ հայաս-
տանի որբերուն ներկայացում
մը տուին ու հանդիսականներուն
ժողովրդին արժանացան առանց
բացատրութեան :

Այս աստիճան յաւակնոտ ըլ-
լալու բեմին վրայ մէկ քանի ան-
գամ երեւնալէն քաջալերուած
ինքն շարունակական խումբ մը
կազմել, չիտակը զարմանալի
բան է :

Արդեօք ասոնք ալ ժողովրդէն
քաջալերութիւն կը յուսան-
ի հարկէ այդ : Բայց ինչներն
քաջալերէ ժողովուրդը : այսպի-
սիներն են որ յաճախ կեննեն կը
պոռան «քաջալերութիւն չի կայ
եղբայր, քաջալերութիւն չի կայ» :

Ասոնք են ահա Պուկարահայ
բեմին ներկայացուցիչները, ար-
դարեւ շատ յուսալու չէ : Բայց
զոնէ պիտի ինդրենք «Վէ-
սէլօ» խմբի գերակատարներէն
որ քիչ մը աւելի յարմար թատ-
րերգութիւններ ընտրեն հասա-
րակութեան ներկայացնելու հա-
մար, քանի որ անոնք միայն
ճանչցուած են Պուկարահայ բե-
մին վրայ իրր գերագոյն տեղը
բռնող գերակատարներ :

ՄՈՒՐԱՍ-ՍՈՒՐԱՍ

—)(—

ԱՌՈՒ ԿՏԱԿԸ

(ԻՐԱԿԱՆ ՊԱՏՄՈՒԹԻՒՆ ՄԸ)

(Շար. Լախ. քիւիկ եւ վեր)

Մերթ ընդ մերթ և՛ն բանասար-
կեալներ վեր, դատաւորին քով կը
կանչուէին : Շատերը այլեւս չէին
գտնար, ոմանք մշտնջենական բան-
տարկութեան կը դատապարտուէին,
ոմանք բնի խոստովանցելու հա-
մար անջնջու կը տանէին : Մէկը
միայն, Ջատիկ անունով, կրկին
վերադարձաւ մուլայի մը հետ : շր-
ջապատուած քանի մը ոստիկաններէ
որոնք այս անգամ երկիւղած յար-
գանքով մը կը վերաբերուէին իրեն :
Առջի բերան, ամէնքը զարմացան
այս անօրինակ փոփոխութեան վրայ,
բայց զիւղապետ Աւօն իսկոյն կոա-
նեց եղբու թիւնը : արիւնը զուխը
ցատկեց, չի կրցաւ կատաղութիւնը
զսպել, ճեղքեց ոստիկանները, հա-
սա ու բացողին քով, «վա՛ս» գոչեց
ու թքաւ երեսին :

Վասորդ ժամ վերջը, զիւղապետ
Աւօն կանչուեցաւ :
Խոտոռ ու այրած դէմքով դաժան
մարդ մըն էր հարցաքննիչ : դատա-
ւորը, կանանչ փաթառը զլխուն
կապած եւ հաստ ֆիւրջ կոնակին,
չի նայելով որ դեռ աշուն էր, Գժոզ-
քէն փախած ճեւղի մը կերպարանք
ունէր, երբ տափակ ւ լայն թունջ-
քը ցցած սեւ ու նեղ աչքերը յստած
կը հարցաքննէր Աւօն :

Իսկ Աւօն երբեք իր պաղարեւ-
նութիւնը չի կորսնցուց, բնաւ
խօսքի տակ չի մնաց : Ոչ մէկ սպառ-
նալիքի առջեւ խոնարհեցաւ, ոչ մէկ
խոստումով հրապուրուեցաւ, իր վա-
սած սրտին բոլոր բոցերը թափեց
այդ մարդուն երեսին, կշտամբեց,
նախատեց, անիծեց գոյն, ինքն ալ
սպաննաց իր կարգին ամբողջ ազգի
մը կատաղի վրէժով :

Վաստաւորը զայրացաւ, փոփրաց
կեպուրի մը իր առջեւ իսկ այդ
աստիճան համարձակութիւն ցուցնե-
լը տեսնելով, ժամ առաջ ուղեց կոր-
սընցնել աչքին առջեւ այդ յան-
գուպն ծերունին, ուստի կտորակ

րոյ այդ զգացումը, ինչպէս նաեւ
փորձառու, կեանքի մէջ յափրացած
գլուխներու խոհեմ խրատները կը
տեղադնուէին, կը սպաննեն անոր բո-
լոր ինքնածին անուշութիւնները :

Են միշտ պատրաստ է, ձեր քով
է, ուր որ ալ ըլլաք : Ինչ պայմանի
ու վիճակի մէջ ալ գտնուիք : Հերթը
է որ երկար բարակ տրամաբանող ի-
մաստասէրներ չըլլաք, ընկերային
նախապաշարման ցանկին առջեւ չա-
բանող վատ, տկար չըլլաք :

Վատու մը կամ իրիկուն մը, ար-
շալային ցուրերուն, կամ լուսնային
չողերուն տակ կը ծնի ան կապոյտ
կամ սեւ աչքերու խոր ու անուշ
նայուածքէ մը, և կամ ծիրանի ու
նուռ շուրթերէ փրթած ծագիկ
ժպտէ մը, ու դուք եթէ մոլորեալ մը
չէք, եթէ երբէք ձեր մէջ դեռ կոյս,
անորոր կը պահէք ձեր հոգիին նըր-
բութիւնը անսպառեցեք : վաղեցեք
անոր, ինչքան ալ ծանր ըլլայ կեանք-
քի մէջ ձեր մղած կռիւր, որքան ալ
դառն մտածումներ թանձր խառա-
րով մը լեցուցած ըլլան ձեր ներքը :
կարող է ան զձեզ նոր ուժով մը
լեցնելու զձեզ նոր լոյսով մը ողո-
ղելու :

Կարժէ ապրել սիրոյ այդ կեանքը,
որքան սուղ ալ ըլլայ անոր գինը :

բոլորն ալ վայելքները, ինչ
չափով ինչ որակով ալ ըլլան, թերի
անհամ բան մը պիտի ունենան ի-
րենց մէջ, և անկարող զմեզ ամբող-
ջովին գոհացնելու, յաւիտեականա-
պէս պիտի տանջուինք անյապ ծա-
րաւով մը, ու անպիտակցաբար աչ-
քերնին պիտի պտտցնենք վերն ու
վարը, բնազգաբար ձեռքերնին պիտի
կարկանդակաբար ալ ու ձախ, ընդունելու
համար այն ցուրը, կրակը, որ ան
հուսօքէն անուշ նայուածքէ մը կա-
թելով, պիտի երկնայ մեր էութեան
խորը, ու հոն ճառագայթելով : Բո-
ղանալով իր փողփուն ու ետուն ա-
լիքները պիտի տարածէ մեր երակ-
ներուն մէջ, անձանօթ աշխարհի մը
անձառ երանութիւնները ծաւալելով
հոն, ու անոր համայն ազդեցութեան
տակ, անոր ստեղծող, հրաշագործ
գաւազանին հպումովը, մեր մէջ
պիտի արթնանան դեռ մինչեւ այդ օրը
կոյս մնացած և կամ ընդարմացած
զգայութիւններ, մեր թուլցած ու
խուլցած լարերը պիտի թրթռան, և
կեանքը, զմեզ շրջապատող ստար-
կաները աւելի անուշ, աւելի երան-
գոտ և աւելի ազուրը պիտի ելե-
ւան :

Բոլոր անոնք, որ ընկղմուած նիւ-
թապաշա վայելքներու խորը, և կամ

իրենց մէջ վատուած տարբեր կրակ-
ներու մէջ մաշած են սիրոյ զգացում-
ներն, թերեւս հեղինական ժպտով մը
ողջունեն սիրոյ այս նախերգանքը :
Սակայն եթէ հաճին, անգամ մը վեր-
լուծել իրենց անցեալ օրերու տես-
ջանքներն ու ձգտումները, և կամ
թերթին իրենց կեանքի երազած է-
ջերը, ապահովաբար պիտի համոզ-
ուին, որ եղած է ժամանակ մը որ ի-
րենք ալ սիրոյ այդ կրակի կարօտովը
այրուած են, և յաճախ իրենց
խոշտանքներուն մէջ, անգիտակցա-
բար ականջ տուած են ձայնի մը որ
իրենց մէջ երգած է, և զոր սակայն
չեն հասկցուած, իրենց մեղաւոր
կեանքի կիսատ էութեան մէջ միշտ
զգացած են պէտքը քոյր հոգիի : զոր
սակայն չեն կրցած գտնել, սխալ
ճամբով մը նետապնդելով, և կեանքը
ապրած են առանձին, եսական ու
խուլ :

Իայց ուրկէ պիտի բղխի սիրոյ այդ
ցուրը, ով պիտի ներարկէ մեր մէջ
այդ բոցին շատնազաղները :

Սեւերոգ է երկար յոգնութիւններ
ստանձնել ունենալու համար զանի,
և բոլորովին աւելարդ, վնասակար
հաշիւ ու մեղմութիւն խառնել անոր
մէջ :

Հաշիւը կը խղէ, կը սմբեցնէ սի-

կերպով ըստ. «Կամ պէտք է ընդունիս իսլամական սուրբ հատաճառը, կամ թէ քեզի կախաղան պիտի հանենք»:

Ա. օհին համար նորոթիւն մը չէր ասիկայ. արդէն կը գուշակէր թէ վերջ ի վերջոյ իրեն ալ այլ առաջարկը պիտի ընեն. բայց թշնամիին ձեռքով սպաննուելու գաղափարը կը կատարեցնէր զինքը: Քրտինքի պող կաթիլներ շիթ շիթ վար կը թափէին սոփոյն այտերուն ծալքելէն. ամբողջ մարմնով կը դողդողար. սրահին մթնոլորտը անեղօրէն շիթ ճնշէր իր սկար թորերուն վրայ. ի՞նչ պատասխանէր:

Իստաուորը կրկնեց իր առաջարկը: Ա. օ հաղար անգամ պիտի նախընտրէր այդ վայրկեանին շանթահար ըլլալ, մեռնիլ քան թէ նստաճառը ուրանալ. Ամբողջ երկինքը, իր Աստուած ու սուրբերով իրեն օգնութեան կը կանչէր. որպէս զի գոնէ անշնչանայ. ու յետոյ իր դիակին վրայ դատաւորը թող յազնէն իր վրէժը. նախազգացում մը. բնազդ մը իրեն զգացնել կուտար թէ մահը արդէն մտեցած է. բայց կը յապաղի գայնու. Ա. օ ուղեց ժամանակ վաստակիլ. Համակիրակիլ ցցոյց գատաւորին պահանջքին. բայց 24 ժամ միջոց խնդրեց վերջնական պատասխան մը տալու համար:

Ա. օն տարին նեղ ու ցած. գեանափոր խցիկ մը. ուր երբեք արեւուն ճարագայթները չէին կրցած թափանցել. Թաց գեանին ու կուռ պատերուն վրայ խոնաւութեան սիրտահար ձծիներ ու սողուններ իրենց հանգրտին մէջ խողոված՝ սկսած էին փախչիլ նորեկ հիւրէն սարափահար: Հոն պիտի մնար Ա. օ ամբողջ օր մը ամէն յարաբերութիւններէ մեկուսացած: Մոթիւն մէջ առ իսրիափ յառաջանալով խցիկին անկիւնը ծուռկի եկաւ. աչքերը վեր յառեց իսաւային քողէն անդին բան մը որոնելով. իր վերջին ժամերուն երկինքը զիտելու վայելքն ալ յախշտակած էին իրմէ: Ժամերով գեանը փռուած կուլար. կը հեծեծէր. մերթ գլուխը վեր կը բարձրացնէր եւ բազուկները տարածելով. Աստուածէ կը խնդրէր:

Ո՞վ գիտէ եթէ անգամ մը մտիկ չընենք մեր սրտի ձայնին. միթէ երկրորդ անգամ պիտի բարսխէ՞ ան:

Սիրոյ այդ փրկարար լոյսն էր որ ծագեցաւ Կեղանան վարդգէսի մթապան հորիզոնին վրայ իր մաղձոտ. ու յուսահատ օրերուն մէջ:

Վարդգէս թշուառութեան մակնթացութեան մղուելով. ասնայի կեդրոնէն հետհետէ քշուած էր զկալի վեր. քաղաքին հիւսիսային արեւելեան կողմը. նոր-թաղի հեռաւոր մէկ անկիւնը. ցածուկ տան մը մէջ:

Պոլսեցի բնտանիք մը. որ կը բաղկանար հօրմէ մը. մօրմէ մը եւ մանչ ու աղջիկ երկու գաւակներէ. վարձած էր այդ տուէրը:

Այդ ընտանիքին հայրը. Ոսկիան Գ. արագաչեան. 50-55 տարեկան մարդ մը. Պոլսոյ մէջ միջակ կարողութեան աէր. 96 ին իր բոլոր ունեցածը թողած ապաստանած էր Վանա. ուր ապրելու եւ ապրեցնելու համար իր ընտանիքը ստիպուած էր փողոցները եւ պաղարները թաշկինակ. գուլպա եւ այլ մանր մուսր բաներ ծախել: Մայրը. Աղաւնի հանրմ. պարկեշտ եւ անաչէն կին մը. իր էրկանը կօժանդակէր լուացք արդուկ ընելով. Մանչը հազիւ 12 տարեկան. դպրոց

բէր որ ժամ առաջ հոգին աւանդէր. մերթ յուսահատ երեսները կը ծածկէր բազրը անթիւնով: Սեւեռուն մահուան գաղափարը միշտ հիւանդագին յափշտակութեան մը մէջ կը պահէր զինքը: Աչքերը արցունքէն կարմրած իրենց կոպիճներէն դուրս թափիլ կուզէին կարծես: Խցիկին մէջ տիրող ճնշիչ խաւարը ալ աւելի կը շնչաէր Ա. օյի հոգեկան հիւանդ արամադրութիւնները: Կարող աչքին առջեւ կուգար իր անցեալը. խաղաղ ու անդորր բնտանեկան յարկին մէջ վայելած անուշ հրճուանքը: Բայց յանկարծ իր աչքերը կը բողբոջակէին. աւելի կուռէին կը լեցուէին արիւնով. ամբողջ մարմինը ջրածգական սարսուռներով կը ցրցցուէր. բնորոտ ռաքի կը կանգնէր ու կատաղօրէն կը յարձակէր զկալի խրցիկին դուռը. որուն ամուր փականքին առջեւ իր ճիղերը ի զօր կը խորտակուէին: Այն ատեն յուսահատ լքու մով մը կը տարածուէր գեանին վրայ. զէմքը խկոյն դիակի պէս կը սոգունէր. խոր հառաքները դուրս կը վիժէին սրտին այրքելէն. ու երկար ժամեր անզգայ կը մնար:

Այսպէս անցաւ ամբողջ ցերեկը: Արեւուն թոյլ ու աղօտ նշոյնները. որոնք դրան ձեղքերէն ներս կը սպրդէին գողունի. մարեցան տակաւ ու թանձր խաւարը ալ աւելի հաստ քողով պատեց Ա. օի շուրջը: Գիշերուան մտայ սոսկումը ալ աւելի գրգռեց Ա. օի ջիղերը: Քանի աչքին առջեւ կուգար ցարդուած բնտանիքը կատաղութեան փրփուրներ կը փայթէին բերնէն վրէժի զգացումը կայրէր զինքը. Բայց անմիջապէս միտքը կիշխար թէ ինքն ալ թշնամիին ճանկերուն մէջն է. ու քանի մը ժամէն իր գաւակներուն բաղդին պիտի արժանանայ:

Օրը արդէն սկսած էր տարածամիլ երբ դուռը բացուեցաւ. ու բանաստակաբար Ա. օյին թեւէն բռնած վայրագ կոպտութեամբ դուրս քաշեց զինքը այս զազրելի նկուղէն:

Անմիջապէս զինուորները չըջապատեցին զինքը եւ առաջնորդեցին դատաւորին քով:

Ա. օ զարձակ նոյն կամքի աննկուն

կերթար. իսկ աղջիկը Սաթենիկ 18 տարեկան. տանը մէջ իր մօրը կօժանդակէր:

Վարդգէս այդ տանը ամենէն լաւ սենեակը վարձած էր 10 ֆրանք ամսականով. եւ որքան որ ինք նեղութեան մէջ էր. սակայն մօտէն տեղեակ ըլլալով այդ ընտանիքին նեղ կացութեանը. ամէն ճիգ կը թափէր. եւ ամէն զրկանք կը կրէր իր վարձքը ժամանակին վճարելու. եւ թէ այս պատճառով. եւ թէ իր պարկեշտ եւ զգուշաւոր գնացքին համար շատ կը սիրուէր այդ ընտանիքէն եւ Աղաւնի հանրմ գրեթէ մօր մը գուրգուրանքով կը պատէր զանի:

Վարդգէս սուսնները իր սպրուտի հոգեբովը ծանրաբեռնուած. աջ ու ձախ նայելու ոչ սիրտ ունէր եւ ոչ ալ ժամանակ. եւ բոլորովին լուսազրուութիւն չէր գարձներ տան մէջ եղողներուն. մինչեւ անգամ սառն անտարբերութեամբ մը կը փոխարինէր իր վրայ թափուած գուրգուրանքներն ու խնամքները:

Առտուն կանուխ կը մեկնէր տունէն եւ իրիկունները շատ ուշ կը վերադառնար. եւ հակառակ Աղաւնի հանրմի թախանձանքներուն. երբէք չէր երթար անոնց մօտ քիչ մը տեսնուելու. խօսակցելու եւ լռիկ կը

արիւթիւնը ցոյց տուաւ. կրկնեց ինչ որ արդէն հազար անգամ ըսած էր առտուն. բողբոջեց. սպաննաց ամբողջ ազգի մը ապագայ վրիժառութեամբ ու խորիտաբար մերժեց. անխուսափելի մահուան սպաննալիքին տակ. իր ազգութեան ու հաւատքին հանդէպ ամէն դաւաճանութիւն:

Վճուկան վայրկեանն էր այլ եւս. Իուրսը գատարանին մեծ դրան առջեւ. յապտերին քով մասնաւորապէս պատրաստուած լայն բեմի մը կից մեծ սրնախ մը վրայ քովքով երկնցած հասա փայտի կտորէն մահապարտի չուանը կախուած էր. Հոն բերին ձերուսի Ա. օն. զողջօջ քայլերով. կապարի պէս սոփոյն ու կիսամեծ:

— Ըսելիք մը ունի՞ս հարցուց դատաւորը բարձրաձայն:

Աչքերը կէս մը բացաւ Ա. օ. նայուածքը ուղղեց զէպի դատաւորը կարծես հասկցնելու ուզելով թէ ալ ի՞նչ ըսեր. երբ զինքը մտիկ ընելու ոչ մէկ արամադրութիւն ցոյց կուտային ու գիտակցաբար կը յամառէին իրենց անարդար ու գաղտնային վճարի մէջ: Յանկարծ իր աչքերը հանդիպեցան կախաղանի չուանին: Ա. օյի արիւնը գլուխը զատկեց. աչքերը փայլակի պէս սկսան վառիլ. ակնդարդի մը մէջ խոյացաւ զինքը շրջապատող զինուորներէն մէկուն վրայ. քաշեց անոր սուրը. սվրէժ պէտք է լուծեմ գոտաց ու զարկաւ ուժգին մարդուն ճակարին ձեղքեց զանկը եւ գիտին տապալեց զայն:

Իրաբանցումը արիւնք ամբոսին մէջ. սարսափելի աղմուկ մը փրթաւ. կատաղի. հրէշային գլուխներ սկսան յառաջ խոյալ. զէպի կախաղան:

Միեւնոյն վայրկեանին հրացանի պայթիւնները փոխանակուեցան. զինուորական շղթան խզուեցաւ. ամբոսն ու զօրքերը իրար խառնուեցան. խուճ մը զինուած կտրիճներ յարձակեցան խմբին վրայ. տոնի Ա. օն վիրաւոր. արիւնաթաթախ վրձակի մէջ ու սկսան դուրս փախչել քաղաքէն:

Երբ քաղաքէն դուրս ելան. Ա. օ արդէն մահուան դուռն էր. իր բոլոր

քաջութիւն իր սենեակը. ուր ձմեռուան ցուրտ օրերուն մէջ կրակը. եւ շատ ատեն լոյսն անգամ կը պակսէր:

Բայց երբ Վարդգէսի գործ մը գըտնելու յոյսերը իրարու ետեւէ մարեցան. երբ ապագայի համար շոյալուած ձրի ու առատ խոստումներու առջեւ իր ներկան բողբոջովին մթնցաւ ան ատեն սկսաւ երկար տունը մնալ:

Պոլսէն քանի մը կտոր գրքեր բերած էր հեռը. հիմա կը ջանար անոնց ընթերցումովը խզել իր մէջ ճանաչող գաւառի մտածումները:

Սակայն այդ ընթերցումներն ալ երկարատեւ չէին ըլլալ. հազիւ երկուս մը կը կարդար եւ անա ուժգին հոսանքով մը իր գանկին մէջ կը խուժէին կը փոթորկէին իր վրձակին ամբողջ սեւութիւնները. իր ապագային բոլոր անորոշութիւնները. ինչ ատեն Վարդգէս զինքը հալածող. իր հոգին խոցոտող այդ սուր. մաշող մտածութիւնները վանելու համար կը ձգէր գրքերը. կը սկսէր գահավէժ քայլերով չափել սենեակին երկայնքը. եւ կամ կերթար նստիլ պատուհանին մօտ. որ տանը բակին վրայ կը նայէր:

Սաթենիկ. Վարդգէսի տանտիրոջ

ուժը հաւաքեց ու հոգեւոր փոփոխութիւններով ըսաւ զինքը շրջապատողներուն. «Ես գոհ եմ որ գէթ վրէժս առի. բայց դեռ հարիւր հազարներով անձեղներու արիւնը վրէժ կը գոչէ անդադար: Կտրիճներ. զէնքը ձեզի անբաժան ընկեր ընտրեցէք եւ ուստեցէք չի մեռնիլ ձեր գնդակը թըշնամիին կուրծքը խրելէ առաջ: Ու թող աշխարհ հասկնայ թէ ազգի մը վրէժ ինչորութեան հետ խաղի չելլուիր: Ահա իմ վերջին կտակս»:

Աշնանային իրիկուն մըն էր. արիւնը դեռ նոր հորիզոնին ետեւ սկսած էր պահուել. Մթնշաղ դաշտին վրայ. մարգարտաշող. երկնագեղ երկնքին անհունութեան մէջ կը տարածուէր շարաշուք սարսուռ մը. զող մը որ օրուան միասարսուռի կը յաջորդէ: Իաշտին սպիտակ գոլորտները վերջալուսին շողերէն ոսկեղօծուած աղօտ հայելի մը կը ձեւացնէին սահող գիտակին սոփոյն ու թափանցիկ ջուրերուն հետ: Քիչ առաջ. վերջալուսին ճառագայթներէն մաղուող զեղնած տերեւիկները քակեղէն անձրեւի մը հանգոյն. գեանի կը թափէին. հիմա. կարծես սեւ ձիւներու խոշոր հատիկներ են մահաթոյր:

Ուր միացին երէկի երազները. հէգ Ա. օ. Այսօր տխուր հողակոյտի գլուխը ամայութիւնն ու աւերակը կը թագաւորէ. Գո. եղբայրները սեւ փռատուրութեամբ զիրար կը թզկտեն. ու պանդխտութեան մէջ կը մաշին. կը փճանան անյոյս: Մոռցած իրենց հաւատարկաց թշնամին. անոնք իրարու կը դաւաճանեն. եւ մինչեւ իսկ կը յանդգնին անարգել իրենց ազատութեան նահատակներուն թանկագին յիշատակը: Իու երազները օղբ ցնդած են ու ջուր կտակող ոտնակոխ եղած է յաւէտ. զժրաղգ Ա. օ:

Ու տերեւները կը թափին. կը թափին անդադար...

ՉԱՐՈՒՆԻ

Ֆիլիպ

աղջիկն ալ. գրեթէ միշտ կուգար բակը նստելու. ձեռքը գուլպա մը եւ կամ կարելու լաթ մը առած:

Սաթենիկ որ ինչպէս ըսինք հազիւ 18 տարեկան կար. հիմա լի գեղեցկութիւնով մը օժտուած էր:

Ենթադրեցէք սեւ երկար յոնքերու տակ կապոյտ. Խոշոր աչքեր. կաթնաթոյր մորթ մը. այտերու վրայ կարմիր թաւիշով. կարմիր շրթունքներ մարգարիտ ակունքերով. եւ ասոր վրայ աւելցուցէք երկար մետաքս մազեր. մինչեւ ազգերը իջնող. եւ ալապատդէ լանջքին տակ կանոնաւոր կուրծք մը. նորափթիթ կոկոններու զգլխիչ վէտիտումներով ու կուռնեաք Սաթենիկի ամբողջ հրաշակները:

Վարդգէս առաջները գրեթէ անտարբեր ու անուշադիր իր մօտ ապրող այդ չընաղ ու թարմ երեսին. իր առանձնութեան մէջ. իր կամաւոր բանտարկութեան օրերուն քիչ քիչ սովորեցաւ անոր նայելու:

ՎԱՀԱՆ ՄԱՆՈՒՆԻՆԻ

(Շարունակելի)

ԱԶԳԱՅԻՆ ՔՐՈՆԻԿ

Երուսաղէմի հայ և յոյն պատրիարքներու և Ազգ. քսանդրիոյ նորընտիր յունաց պատրիարքին միջեւ այցելութիւններ փոխանակուելու և սիրալիր տեսակցութիւններ տեղի ունեցելու են :

— Ս. Կաթողիկոսը մէկ շաբաթ առաջ Տփլիս մնացել է, նորին Ս. օծութեան պարզ ուղեւորութիւն մը չէ որչ կատարել է այս անգամ, այլ եկեղեցական և դպրոցական գործերու մասին Կովկասի կառավարչապետութեան ղրկուածներ և բանակցութիւններ կատարելու համար :

Բեթերպուրկէն հեռագիր եկել է Տփլիսի կառավարութեան փակելու հրատարակչական ընկերութիւնը, որ ինչպէս յայտնի է, ժողովրդեան ընթերցանութեան յատուկ վէպեր, բարոյական և կրօնական գիրքեր, թատերգութիւններ և ինչպէս որ կէ թէ թարգմանօրէն և թէ հեղինակութեամբ : Գարոցները խից, մարդասիրական և բարեգործական ընկերութիւնները խաբանց, կարգը եկել է հրատարակչական ընկերութեանց : Տեսնենք ապագային զեռ ինչեր պիտի խորհի մեր յաւէտ գթառատ Ձարը Կովկասի մէջ հայ տարրը բոլորովին խելու համար :

— Հանգուցեալ Ալվազովսքիի անունով ռուսաց գեղարուեստներու սկզբնաժողովին մէջ թոշակաւոր աշակերտ մը պահելու համար թէ՛ դոստիացիները գումար մը հանգանակել են :

— Կարսի առաջնորդը բողոքած էր ռուսաց դպրոցական վարչութեան գէ՛մ, առաջարկելով որ կարգ մը եկեղեցապատկան տուներ և խանութներ գրաւած է, սակայն այս արդար բողոքը անլսելի մնացել է և հետեւաբար անհետեւանք :

— Գրիգոր Միրզաբեկեան անուն Ռուսահայ մը կտակ մը թողուցել է, որուն տրամադրութեան համաձայն, 90 թոշակաւոր աշակերտներ պիտի տրուին ռուսահայ բարձրագոյն դպրոցները : Մեր հարուստներուն կտակներն կարծես յաւիտենականապէս իրենց սնտուկներուն մէջ մնալու գաւապարտուած են :

— Պուրթէշի եկեղեցւոյն թագ. խորհրդոյ անդամներէն ոմանք դատի կանչուելու են ազգային կալուածներուն հասոյթները ըստ հաճոյս գործածելուն և ըստ օրինի հաշիւ չի ներկայացնելուն համար :

Ամբաստանութեան մեծ բաժինը կը ծանրանայ, կըսուի, Գ. Ե. ին վրայ : Իցիւ թէ՛ Ռուսահայոց բոլոր հայաբնակ քաղաքները հետեւէին Պուրթէշի հայոց բարի օրինակին :

— Ամերիկայի մէջ հայոց բուրձաբերական պատուելի մը անգլիէրէն կրօնաթերթի մը մէջ յօդուած մը հրատարակել է հայ եկեղեցիին ղեմ կրկնելով հինցած, ձգուած բանաձեւներ, պատկերապաշտ, տգէտ անուանելով հայերը : Մինչեւ երբ պիտի ստիպուինք ձեր կռիւնները մտիկ ընել, մենք ալ ձեզի պէս և ձեռնէ աւելի լաւ քրիստոնեաներ ենք : Եթէ իսկապէս կը փափաքիք մեծ վարդապետին խօսքերը քարոզել, Ափրիկէի խորհրդը գացէք, պատուելիներ :

— Զինացործ Միրիճեան Մկրտիչեան անուն ճարտար արհեստաւոր մը նորահար սուր մը պատրաստելով Պուլկարիոյ իշխանին նուիրել է, իշխանը մեծապէս գոհ մնացել է և գրամական պարգեւ մըն ալ ըրել է յիշեալ արհեստաւորին :

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Թ Ո Ւ Ի Ք Ի Ա

Խաղաղութեան վեհաժողովին մէջ հայկական շարքերը նկատի առնուելու են և կարծիք յայտնուելու է որ հայկական կոտորածները վերջին ժամանակներս զործուած է՛ն դժպէտի գործերը կը նկատուին : Վեհաժողովի իր համակրութիւնը յայտնել է հայ դժբաղդ ազգին և մաղթել է որ տաճկական կառավարութիւնը ստիպուի յարգել հայերուն անբռնաբարի իրաւունքները, որոնք ապահովուած են ՍանՍթէֆանոյի և Պէրլինի դաշնագրութիւններով :

— Օսման վաշտն խաբէութեամբ թողել է Պոլիս և կարողացել է Մէսսօքի շոգեհաններէն մէկը մանկելով Մարտիկա փախչիլ : Կը յուսացուի որ Լոնտոն երթայ, կըսուի, Մահմուտ փաշայի հետ միանալու համար : Տառտը միւս փաշաներուն :

— Թրքական թերթերը կը տեղեկացնեն թէ՛ Նահը, առաջին ընդունելութեան ատեն, Սուլթանին ձեռքը համբուրելով զանի «խալիֆ» կոչել է : Կը վստացուի որ Նահը իր այս անխոհեմ ընթացքին համար կորսնցնէ Ալիի ազանգին հետեւողներուն քով իր ունեցած ժողովրդականութիւնը : Թուրք պաշտօնական թերթը անամթաբար կը յայտարարէ Մուսթաֆայի միացումը Սուլթանին ուղղութեանը տակ և կը յայտարարէ որ Պարսկաստանի և Թուրքիոյ միացումը Մուսթաֆայի աշխարհը մեծապէս պիտի ուրախացնէ :

— Շահը մեկնած է Պոլսէն մեծահանգէս արարողութիւններով ինչպէս որ ընդունուած էր : Պարսկական պաշտօնական առաջնորդները զինքը մինչեւ Մարտի

Գիւղ ուր կապաէր մասնաւոր կառախումբ մը : Պուլկարիոյ գործակատարը պիտի ընկերանայ մինչեւ Սօֆիա :

— Սկիւպի մէջ թուրք երեւելիները տեղական իշխանութեան գէ՛մ ապստամբած են, հրամանատար Մէհմէտ փաշայի ի գործ դրած կեղծութիւններուն համար : Ասիկա միեւնոյն սրկան է որ կ'ըզկնի գիւղաքաղաքին մէջ անօրինակ խժոճութիւններ ի գործ դրած էր, և որ, Սելանիկի հիւպատոսներուն պահանջին վրայ պաշտօնանկ եղած էր : Այս անգամ միւս իսկ թուրքերն ալ կատարուցել է, ալ կարելի է երեւակայել թէ ի՛նչ եղած կրնար ըլլալ քրիստոնէից վիճակը :

— Անցած ուրբաթ օր մեծ խառնաշփոթութիւն մը վերատին ծագել է Պոլսոյ մէջ : Պոլսոյ Ի. քսարայ թագին 3 թուրք առնաւորները սուր և վեցհարուածեան ձեռքերին, կը վերաւորեն մէկ քանի զինուորական պաշտօնեաներ : Ասոնք զինուորական շղթայի տակ կառնուին և հազարապետը կը պատու իրէ անձնատուր ըլլալ : Առնաւորները կը յանդգնին շղթան կտրելով փախչիլ : Երկուքը կը ձերբակալուին և միւսը, սուրը ձեռքը, կանհետանայ : Հոն գրտնուող քաղցութեան մէջ ա՛հ ու սարսափ տիրել է :

Ձ Ի Ն Ա Ս Տ Ա Ն

Զինու կայսրը շատ փաղաքշական նամակ մը գրած է Գերմանիոյ կայսր Գեյտլէրի մահուան առթիւ : Գերմանիոյ կայսրն ալ մեզմ լեզուով պատասխանած է անոր :

— Պ. Տէլրասէ, Ֆրանսայի արտաքին գործոց նախարարը, տէրութեանց զրկած է հետեւեալ իմաստով շրջաբերական մը : Պէտք է շուտով կարգադրել չինական գործը և համակարծիք ըլլալ Պուլկարի յանցաւորները պատժելու համար : Բանակցութեան զլխաւոր պայմանները կը նկատէ տէրութեանց կրած բոլոր կորուստներուն փոխարինութիւնը և ապագային սոյնգունակ հակամարդկային զէպքեր չը կրկնուելուն ապահովութիւնը :

— «Թամպոնի ուղղուած հեռագիր մը կը ծանուցանէ թէ՛ ռուսերը կը հաւատեն որ Նրանսական զեսպանատուր պիտի թողու Բէքին և միւս տէրութեանց ներկայացուցիչներն ալ անոր օրինակին պիտի հետեւին : Կայսրը և կայսրուհին թախտաւորութիւն հարաւային կողմերը կը գտնուին և կը դիտուին Բէքին վերադառնալ :

— Շան-Հայ-Քուան, որ Մանչուրիայէն Բէքին գացող երկաթուղիի գծին վրայ կը գտնուի դաշնակից զօրքերէն զբաւուել է : Անգլիացիները և գերմանացիները կը պատրաստուին նոր զօրքեր զրկել Բէքին :

Թ Ր Ա Ն Ս Վ Ա Ա

Պօէրները իրենց նախագահը եւրոպայ զրկելէն ետք, նորէն սկսել են շարժիլ Օրանժի և Նաթալի մէջ : Անգլիական կառախումբ մը յարձակում կրած է, անգլիացի սպայ մը, չորս մարդ սպաննուած են և շատ մը վակօններ ալ խորտակուած : 70 Պօէրներէ բաղկացած ջոկատ մը Վէրէնէր մտեր և գրաւել է մեծաբանակ հանդերձեղէններ, յետոյ ուղղուել է գէպի բնակիչները առանց նեղութիւն մը տալու :

— Պելճիքա բնակող մեծահարուստ հոլլանտացի մը Պրիլ քուէլի թրանսպորտ գեոպանատուր այցելելով կը յայտնէ որ Անտէրլէիտի մէջ Պուլկարի ղեկակար կառքերը և ձիերը նախագահ Գրիւկէրի արամադրութեան տակ կը գնէ սիրալոճար :

Ն Ա Մ Ա Կ Ա Տ Ո Ւ Փ

Կը խնդրուի նամակագրներէն ուշադրութիւն դարձնել իրենց փակցուած նամակագրոյ մին վրայ, որ շատ անգամ նամակին ծանրութեան չի համապատասխանելուն կը ստիպուինք տուգանք վճարել : Ասկէ ետք այդ տեսակ նամակները պիտի մերժենք ընդունիլ :

— Ո. Թր տարեկան մանչ գաւակ մը ի հօրէ որը մնացած ըլլալով իր մայրը կը փափաքի գոյն որդեւէր ազգայինի մը իբր որդեգիր յանձնել օրինական միջոցներով :

Փափաքողները կարող են գիմել խմբագրութեանս :

ԹԱՏՐՈՆ ՍԱՆԹՐԱԼ

«Վէսէլլո» հայ գերասանական խմբին կողմանէ պիտի ներկայացուի վաղը գիշեր ժամը 9ին, «Անմեղ Աղլիկը» ծիծաղաշարժ կատակերգութիւն 3 արար :

Վաղը գիշեր Պ. Ճիվանի խմբին կողմանէ պիտի ներկայացուի «Հայրասպանը» եղբոր գրութիւն 3 արար :

Երգ և պար Տիկին Լիզայի և Օր. Գաթինայի կողմանէ :

Ագրօպաթ Օր. Գաթինայի կողմանէ :

ԳԻՆԵՐԸ ԱՃԱՆ

ՀԱՅԿԱԿԱՆ ԳՐԱՏՈՒՆ

Պատիւ ունիմ ծանուցանել յարգալ յաճախողներուս, որ դպրոցական նոր չըջանին համար, ծանօթ հեղինակներէ, մանկավարժական ուղղութիւնի նոր գրութիւններով պատրաստուած գրողական գրքեր թերի տուած եմ : Մեծաքանակ գնումներու գոհացուցիչ զեղջ, Ո եւ է յանձնարարութիւն անգործադրելի եւ անպատասխան կը մնայ եթէ կանխիկ գրամով ապստամբ չըլլայ :

Գրատանս հետ հաշիւ ունեցողներէ կը խնդրուի որ փութան ժամ առաջ կարգադրել :

Գնում եւ վաճառում ամէն տեսակ նամակագրոյ մերու :

Հասցէ՝ A. Zarbhanelian Librairie Varna (Bulgarie)

Печатница Хр. Н. Войниковъ—Варна.